Խ.Աբովյանի անվան հայկական պետական

մանկավարժական համալսարան հիմնադրամ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ԽՈՍՔԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Կատարող՝ Ք. Երևանի թիվ 21 մսուր մանկապարտեզի դաստիարակ Գոհար Գալոյան

ԵՐԵՎԱՆ- 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ——— 3
ԳԼՈՒԽ 1 ԽՈՍՔԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
1.1 ԽՈՍՔԻ ԽԱՆԳԱՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ԽՈՍՔԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ——— 5
ԳԼՈՒԽ 2 ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ ——— 13
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ——— 20
ՕԳՏԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ——— 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

ՀՀ Ազգային ժողովը 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունել է

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության: Համաձայն օրենքի՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունում կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգը:

Թեմայի արդիականությունը: Ներկա ժամանակներում լուրջ խնդիրներից է համարվում երեխաների և հատկապես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԶԱՊԿունեցող) երեխաների զարգացմանն ու կրթությանը խոչընդոտող հանգամանքները: Հատուկ կարիքներ ունեցող երեխաների կրթությունը կազմակերպելու համար լավագույն լուծումն է ներառական կրթությունը: Այսօր, օր օրի նկատվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թվի աճ: Այս դեպքում պետք է ապահովվել նաև այս սաների կրթադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումը՝ ապահովվելով հողորդակցման և համագործկցության արդյունավետ պայմաններ բոլոր սաների համար, ինչով էլ պայմանավորված է թեմայի ընտրությունն ու արդիականությունը:

Ներառական կրթությունը կրթական համակարգ է, որն ուղղված է հավասար կրթության ապահովմանը և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող մարդկանց ներգրավվածությանը: Ներառական կրթությունը ավելի մատչելի և հասանելի է դարձնում կրթությունը բոլորի համար: Սակայն պետք է փաստել այն, որ ներառական կրթությունը ոչ միանշանակ է ընդունվում բոլորի կողմից: Այսօր հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ շատ կարծրատիպեր կոտրվել են , սակայն երբ մարդիկ պետք է իրենց խոսքը գործով ապացուցեն այդտեղ նկատվում է որոշակի բաց: Շատերն են ասում, որ հաշմանդամություն ունեցող երեխան պետք է հաճախի մանկապարտեզ

սովորի դպրոցում, բայց դեմ են, որ իրենց երեխայի հետ սովորի նույն դասարանում: Նման գաղափարի տեր ծնողները իրենց երեխաներին առանձնացնում են հաշմանդամություն ունեցող երեխաներից և ցույց տալիս իրենց խտրական վերաբերմունքը: Հաշմանդամություն ունեցող երեխաներն իրավունքներն, ինչպես մյուսներինը ունեն նույն հիմքերը:

Հատուկ պայմանների կարիքներ ունեցող են համարվում այն երեխաները, ովքեր ունեն երկարատև խնամքի, բուժման, վերականգնման կարիք. որոնք պահանջում են լիարժեք, բազմակողմանի և ծրագրային մոտեցում: Հատուկ կարիքներով երեխաները նրանք են, ովքեր ունեն հոգեբանական, ֆիզիկական, մտավոր կամ վարքային խնդիրներ:

Ամբողջ աշխարհում ներառումը այլևս ապրելակերպ է, մարդկանց համատեղ ապրելու, աշխատելու և սովորելու կենսակերպ: Յուրաքանչյուր երեխա իրեն պետք է կարևորված զգա հասարակությունում:

Հայաստանում ներառական կրթությունը, լինելով կրթության երիտասարդ համակարգ. դեռևս լիովին ձևավորված չէ, այսինքն իր առջև դեռևս չլուծված խնդիրներ ունի: Եվ հենց այդ խնդիրներն են աշխատանքի թեման դարձնում ավելի արդիական: Կան մի շարք բացթողումներ ինչպես նախադպրոցական, այնպես էլ դպրոցական համակարգում :

Հետազոտության նպատակն է ուսունասիրել և ներկայացնել երեխաների հաղորդակցման դժվարությունների ուղիները ներառական կրթության պայմաններում:

Նպատակից բխվել են հետևյալ խնդիրները՝

1. Ուսումնասիրել խոսքի խանգարումներ ունեցող երեխաների տաիքային առանձնահատկությունները:
2. Բացահայտել խոսքի զարգացման առանձնահատկությունները տարիքային տարբեր փուլերում:

Աշխատանքը կազմված է ներածությունից, տեսական և գործնական մասերից, եզրակացություններից և օգտգործված գրաանության ցանկից, համակարգչային շարվածքով կազմում է 22 էջ:

ԳԼՈՒԽ 1 ԽՈՍՔԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1.1 ԽՈՍՔԻ ԽԱՆԳԱՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԽՈՍՔԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Խոսքը բարձրագույն հոգեկան գործընթաց է, որն ունի մի շարք գործառույթներ: Խոսքի միջոցով մարդիկ հաղորդակցվում են, ուսումնասիրում են հասարակական փորձը և իրենց փորձը փոխանցում հետագա սերունդներին: Խոսքը հնարավորություն է տալիս արտահայտել մեր հույզերը, զգացմունքները: Խոսքը մտածողության գործիք է և երեխայի ճանաչողության զարգացման միջոց: Խոսքն ունի նաև վարքի վերահսկման գործառույթ:

Տարբերում ենք խոսքի հետևյալ տեսակները՝ էքսպրեսիվ (սեփական, ինքնուրույն խոսք) և իմպրեսիվ (խոսքի ընկալում), որոնք իրենց հերթին լինում են բանավոր և գրավոր:

Խոսքը բաղկացած է 4 հիմնական բաղադրիչներից՝ հնչյունային (հնչյունների արտաբերություն), հնչութային (հնչութային լսողություն), բառապաշար և քերականական կառուցվածք:

Խոսքի զարգացումը հոգեֆիզիոլոգիական տեսանկյունից բարդ գործընթաց է: Այն տեղի է ունենում աստիճանաբար: Կյանքի առաջին տարում ձևավորվում և զարգանում են խոսքային նախադրյալները: Այս ժամանակաշրջանը համարվում է մինչբառային փուլ (գղգղանք, թոթովանք), որի ավարտին ի հայտ են գալիս առաջին բառերը: Այս ընթացքում ակտիվ զարգանում է խոսքի առոգանական կողմը: Իմպրեսիվ խոսքը զարգացման տեմպով գերազանցում է էքսպրեսիվ խոսքի զարգացմանը:

Առաջին բառերն ի հայտ են գալիս մոտավորապես 10 ամսականից մինչև 14 ամսական հասակում: Բառ համարվում է ցանկացած հնչյունակապակցությունը, որը երեխան իմաստով է կիրառում: Սովորաբար բառն ուղեկցվում է ցուցադրական ժեստի հետ: Երեխան այս փուլում չի կարողանում նշել առարկան նկարի վրա կամ փոփոխված այլ տարբերակների դեպքում:

Առաջին բառերի ի հայտ գալուն հաջորդում է տարրական ֆրազային խոսքի ձևավորումը՝ 1.3-1.8 տարեկանում (բառ-նախադասության շրջան): Աստիճանաբար բառերը միանում են, և ի հայտ են գալիս երկբառանի նախադասությունները, որոնցում լինում են քերականական սխալներ: Հիմնականում բառերը գործածվում են ուղղական հոլովով, բայերը՝ անորոշ դեմքով և այլն (Ковригина, 2011):

2 տարեկանին մոտ ակտիվանում է բառապաշարի ավելացումը, որում գերակշռում են գոյականները (գրեթե 60 տոկոսը), նաև գործածում են բայեր և դերանուններ: Աստիճանաբար ավելանում են ածականները, մակբայները, երեխաները սկսում են ճիշտ գործածել օժանդակ բայերը: Համեմատաբար ուշ են ի հայտ գալիս կապերը:

Այդ տարիքում խոսքը դառնում է մեծահասակի հետ շփվելու գլխավոր միջոցը: Ժեստերի և դիմախաղի կիրառումն աստիճանաբար նվազում է: Ոչ բավարար խոսքային շփումը զգալիորեն ազդում է ոչ միայն երեխայի խոսքի, այլև ողջ հոգեկանի զարգացման վրա: Այս տարիքում արդեն երեխան կարողանում է հետևել ինչպես պարզ, այնպես էլ 2 մասից բաղկացած հրահանգներին:

1.10 -2 տարեկանում բառերը նախադասության մեջ աստիճանաբար ձեռք են բերում ճիշտ հաջորդականություն, սակայն նախադասությունները կազմվում են յուրովի. սկզբում երեխան ասում է իր ցանկացած բառը, հետո մնացածները («Հացի ուզում եմ»): Քանի որ այս տարիքում «ես»-ը դեռևս ձևավորված չէ, երեխան իր մասին խոսում է երրորդ դեմքով, «չէ» օժանդակ բայն ասում է վերջում: Այս փուլը համարվում է ֆիզիոլոգիական ագրամատիզմի փուլ, որի կայուն տևականությունը վկայում է խոսքի թերզարգացման մասին: Բնականոն զարգացման դեպքում երեխան աստիճանաբար սկսում է յուրացնել տվյալ լեզվին բնորոշ քերականական կառուցվածքը՝ հոլովները, հոգնակի թիվը, ժամանակը (հատկապես դժվարությամբ է յուրացնում ապառնի ժամանակը) և այլն:

2-2.3 տարեկանում երեխաները խոսում են 2-3 բառից կազմված նախադասություններով, օրինակ՝ «Մամա՛, տու՛ր», «Պապա՛, արի՛ տուն» և այլն: 2.3-3 «Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում» 22 տարեկանում բառերի թիվը նախադասության մեջ հասնում է 4-5-ի:

2.5-3.5 տարեկանում երեխան բնութագրվում է խոսքային ակտիվությամբ. սկսում է խոսել խաղալիքների, կենդանիների, նկարների հետ:

Եթե 2.5-3 տարեկանում երեխայի բառապաշարում լինում են միայն թոթովանքային բառեր, և չի ձևավորվում տարրական ֆրազային խոսքը, ապա համարվում է, որ նրա խոսքային զարգացումը սկսում է հետ մնալ տարիքային չափանիշներից (Филичева, 2000):

3 տարեկան երեխաներին բնորոշ է ճանաչողական հետաքրքրասիրության ակտիվացումը: Նրանց հաճախ անվանում են «Ինչուիկներ»: 2.5-3 տարեկան հասակում ի հայտ է գալիս ծավալուն ֆրազային խոսքը: 3 տարեկանների խոսքում հաճախ լինում են

բառերի, վանկերի կամ առանձին հնչյունների ստիպողական կրկնումներ, ակամա դադարներ, որոշ բառերի «ձգված» արտաբերում, որոնք խանգարում են շրջապատողների հետ շփմանը (Филичева, 2000):

Բնականոն զարգացման դեպքում 3 տարեկանում երեխան յուրացնում է մայրենի լեզվի խոսակցական խոսքի հիմնական քերականական կառույցները, փոխում է բառերը՝ օգտագործելով ձևաբանական միջոցներ, խոսում է կարճ, բայց քերականորեն ճիշտ ձևակերպված նախադասություններով:

3-4 տարեկանում ակտիվորեն ավելանում են նորակազմությունները, քանի որ երեխան ունենում է մտքեր, իսկ բառապաշարը չի բավարարում դրանք արտահայտելու համար: Այս տարիքին բնորոշ է ինչպես բառակազմություն, այնպես էլ բառափոխում (հիվանդանոց- «բժշկանոց», մուգ գույն-«մգագույն», սառել-«սառցել», շախմատ խաղացող- «շախմատ խաղող» և այլն): Որոշ նորակազմություններ առաջանում են մանկական ստուգաբանության հիման վրա. երեխաները հնչյունակապակցությունների մեջ իմաստ են փնտրում (սեղանատամ-«աթոռատամ», կափարիչ-«փակարիչ», փշաքաղվել-«շաքարվել», ծաղիկները բուրում են-«ծաղիկները հոտում են»):

Ակտիվորեն զարգանում է ակտիվ և պասիվ բառապաշարը, որում լինում են բոլոր խոսքի մասերին պատկանող բառեր: Բառապաշարը հարստանում է գոյականներով, որոնց հետ երեխան կենցաղում առնչվում է և բայերով, որոնք կատարում է առօրյա գործունեության մեջ: Ածականներից գործածում է առարկայի չափ (մեծ, փոքր, երկար...), գույն, ձև, ֆիզիկական հատկություններ (սառը, տաք, թաց, չոր, կարմիր, փափուկ...) նշող բառեր: Բառապաշարում առկա են նաև մակբայներ (արագ, դանդաղ...): Գիտեն շատ նյութերի անվանումներ՝ թուղթ, փայտ, ապակի, ինչպես նաև՝ դրանց հատկանիշները (բարակ, ծանր...) և դրանցով կատարվող գործողությունները (կտրել, կոտրել, պատռել, ծալել...): Բառապաշարում առկա են նաև ժամանակ և տարածություն նշող բառեր (առավոտ, գիշեր, հետո, առաջ, կողք...):

Ըստ Ա.Ն. Գվոզդևի տվյալների՝ 4 տարեկան երեխայի բառապաշարում առկա են գոյականներ (50,2%), բայեր (27,4%), ածականներ (11,8%), մակբայներ (5,8%), թվականներ «Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում» 24 (1,9%), կապեր և շաղկապներ (2,1%), ձայնարկություններ (0,9%) (Филичева, 2000):

Քերականական կողմի յուրացումն այս տարիքում կատարվում է ինտուիտիվ կերպով: Այս տարիքը համարվում է լեզվական գիտակցության արթնացման տարիք:

3-4 տարեկանում երեխաները կարողանում են պատասխանել հարցերին, վերապատմել հեքիաթներ ու պատմվածքներ, պատմել իրենց տեսածն ու իրենց հետ պատահածը: Պատմելու ժամանակ նախադասությունները կազմվում են ոչ միայն ենթակայից և ստորոգյալից, այլև ավելացվում են լրացումներ՝ որոշիչ, հատկացուցիչ, խնդիրներ, պարագաներ: Երեխան սովորում է բառերը հոլովել և խոնարհել: Նախադասության մեջ բառերը համաձայնեցվում են ըստ դեմքի, թվի և ժամանակի: Օգտագործվում են հրամայական, հաստատական, բացականչական, հարցական նախադասություններ: Բարդանում է երեխայի խոսքի բովանդակությունը, մեծանում է ծավալը, բարդանում է նախադասությունների կառուցվածքը: 4 տարեկանից սկսած՝ նախադասության բառերի թիվը միջինում լինում է 5-6:

Կախված այն բանից, թե որքանով է հարուստ երեխայի կյանքը (զբաղվածությունը), խոսքային միջավայրը, երեխայի խոսքի հետագա զարգացումը տարբեր ընթացք է ունենում (Ковригина, 2011):

Կյանքի չորրորդ տարում (3-4 տարեկանում) տեղի է ունենում արտաբերական ապարատի աշխատանքի բարելավում. արտաբերական շարժումները դառնում են ավելի կոորդինացված: Խոսքում ի հայտ են գալիս սուլական և շչական հնչյունները, որոնք, սակայն, արտաբերվում են փափկացված, քմայնացված (ս, զ, ձ, ծ, ց, շ, ժ, ջ, ճ, չ): Ճիշտ են արտաբերվում բաղաձայնների «կուտակումներ» (իրար հաջորդող բաղաձայններ) ունեցող բառերը:

Բառի ռիթմիկ կառուցվածքը՝ վանկային կառույցը երեխան նույնպես աստիճանաբար 25 է յուրացնում: Նախադպրոցական տարիքում երեխաները դեռևս լիարժեք չեն կառավարում իրենց ձայնը (բարձրությունը, ուժը): Կյանքի 4-րդ տարվա վերջում ի հայտ է գալիս շշուկով խոսքը:

5 տարեկանին մոտ հնչութային գործընթացները կատարելագործվում են. երեխան կարողանում է ճանաչել հնչյունը խոսքային հոսքում, ասել բառ հանձնարարված հնչյունով, տարբերակում է ձայնի բարձրացումն ու իջեցումը, խոսքի տեմպի արագացումն ու դանդաղեցումը:

5-րդ տարվա վերջում երեխան կարողանում է ինքնուրույն պատմություն կազմել: Արտահայտությունները կարճ տեքստ են հիշեցնում: Դրա հետ մեկտեղ ավելանում են քերականական սխալները և դադարները, որոնք պայմանավորված են համապատասխան բառերի ընտրության և դրանք ճիշտ քերականական ձևով համադրելու դժվարության հետ (Филичева, 2000):

5 տարեկանում երեխաները կարողանում են ճիշտ արտաբերել մայրենի լեզվի բոլոր հնչյունները և ինչպես պարզ, այնպես էլ բարդ վանկային կառուցվածք ունեցող բառերը: Այս տարիքում երեխայի կենցաղային բառապաշարը լիարժեք ձևավորված է լինում: Բառապաշարում լինում են ընդհանրական նշանակությամբ բառեր («միրգ», «ընտանի կենդանիներ» և այլն): Ակտիվ բառապաշարում հայտնվում են մեծ քանակությամբ բարդ «Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում» 26 քերականական և հնչութային բնութագրերով բառեր:

5-6 տարեկանում սկսում է զարգանալ հնչութային վերլուծություն և համադրություն կատարելու կարողությունը, որը հնարավորություն է տալիս երեխային առանձնացնել հանձնարարված հնչյունով վանկերը և բառերը այլ վանկերի կամ բառերի խմբից, տարբերակել հնչողությամբ մոտ հնչույթները, որոշել բառի առաջին (վերջին) հնչյունը և այլն:

6 տարեկանին մոտ խոսքի բառաքերականական կողմի ձևավորումը կարելի է համարել հիմնականում ավարտված (Глухов, 2017):

Այսպիսով՝ դպրոց գնալու նախաշեմին երեխայի արտաբերությունը ձևավորված է լինում, բավարար չափով զարգացած են լինում նաև խոսքի մյուս կողմերը, ինչը թույլ է տալիս երեխային հաջողությամբ յուրացնել դպրոցի ուսումնական ծրագիրը (Браудо, Бабылова, Казакова, 2017):

Դիսլալիա (թլվատություն): Դիսլալիան հնչարտաբերման խանգարում է, որի դեպքում լսողությունը և արտաբերական ապարատի նյարդավորումը խանգարված չեն: Սխալ հնչարտաբերման դրսևորման ձևերն են հնչյունի աղավաղումը, բացակայությունը, շփոթումը, փոխարինումը մեկ այլ հնչյունով: Դիսլալիայի մասին խոսվում է, եթե սկսած 5 տարեկանից՝ երեխան որևէ հնչյուն սխալ է արտաբերում:

Դիզարտրիա (անարտրիա): Դիզարտրիան հնչյունների արտաբերման և խոսքի առոգանական կողմի խանգարում է, որը պայմանավորված է խոսքին մասնակցող

մկանների ոչ լիարժեք նյարդավորմամբ: Դիզարտրիայի դեպքում հնչյունների արտաբերման խանգարումները հանդես են գալիս տարբեր աստիճաններով և պայմանավորված են նյարդային համակարգի վնասվածքի բնույթով և ծանրությամբ: Դիտվում է բաղաձայն և ձայնավոր հնչյունների սխալ արտաբերում, տուժում է ձայնը, շնչառությունը, խոսքի տեմպը, արտահայտչականությունը, խոսքը դառնում է այս կամ այն չափով անհասկանալի:

Ռինոլալիա (ռնգախոսություն): Այս դեպքում առկա է հնչյունների արտաբերման խանգարում և ձայնի ռնգային երանգ, որը պայմանավորված է խոսքային ապարատի անատոմաֆիզիոլոգիական թերություններով:

Տախիլալիա՝ պաթոլոգիկ արագախոսություն: Տախիլալիայի դեպքում դրսևորվում է խոսքի ոչ նորմալ արագ տեմպ, հնչյունային և շարահյուսական կոպիտ աղավաղումներ, խոսքային ուշադրության խանգարումներ, սայթաքումներ, կրկնություններ, բացթողումներ, վանկերի տեղափոխումներ: Տախիլալիայի ժամանակ նկատվում են ընդհանուր շարժումների, հոգեկան գործընթացների, հուզական ոլորտի, վարքի խանգարումներ, շարժումներն արագ են, և շարժողական անհանգստությունը նկատվում է նաև քնած ժամանակ:

Բրադիլալիա՝ պաթոլոգիկ դանդաղախոսություն: Խոսքի պաթոլոգիկ դանդաղ տեմպն է: Բրադիլալիայի խոսքային ախտանիշները բազմազան են՝ ինքնուրույն խոսքի, խոսքի ընկալման դանդաղ տեմպ, ձայնի մոնոտոնություն, խոսքը հստակ չէ, աղավաղված է: Այսպիսի խոսքը դժվարացնում է շրջապատի հետ հաղորդակցումը, դիմացինի մոտ առաջացնում է ձանձրույթ, լարվածություն, ուշադրության թուլացում: Նկատվում են ընդհանուր շարժումների, մանր մոտորիկայի, միմիկայի խանգարումներ, շարժումները դանդաղ են, անհամաչափ ու թափթփված: Դանդաղ է ընկալումը, մտածողությունը:

Կակազություն: Արտաբերական, շնչառական և ձայնային ապարատի մկանների ջղաձգումներով (ակամա կծկումներով) պայմանավորված խոսքի տեմպի և ռիթմի խանգարում է: Բնորոշ են կմկմոցներ, հնչյունների, վանկերի, բառերի ստիպողական կրկնումներ, խոսքի մեջ դադարներ և այլ դրսևորումներ: Կակազությունն առաջանում է 2-5 տարեկանում՝ ամենից հաճախ վախի կամ սթրեսի հետևանքով: Կակազության հիմնական ախտանիշներն են խոսքային ջղաձգումները, շնչառության, ձայնի, խոսքի տեմպի ու ռիթմի

խանգարումները, շարժողական ոլորտի խանգարումները, խոսքի խանգարման վրա սևեռված լինելը, խոսելու վախը (լոգոֆոբիա) և այլն:

Ալալիա (անխոսություն): Խոսքի բացակայություն կամ թերզարգացում, որը պայմանավորված է գլխուղեղի խոսքային գոտու օրգանական ախտահարումով: Ալալիայի դեպքում տուժում է ամբողջ խոսքային համակարգը՝ խոսքի իմաստի ըմբռնումը, սեփական խոսքը, բառապաշարը, քերականությունը, գրավոր խոսքի ձևավորումը: Ալալիան բացասաբար է ազդում երեխայի ընդանուր զարգացման վրա: Կախված գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևի խոսքային գոտիների վնասվածքի տեղայնացումից՝ տարբակերում են ալալիայի **2 ձև՝**

- շարժողական (մոտորային/էքսպրեսիվ) ալալիա,
- սենսորային (լսողական/իմպրեսիվ) ալալիա:

Երբեմն հանդիպում են նաև ալալիայի սենսոմոտորային կամ խառը ձևերը, երբ միաժամանակ դիտվում են և՛ էքսպրեսիվ, և՛ իմպրեսիվ ալալիային բնորոշ խանգարումներ: Շարժողական ալալիայի դեպքում խոսքը բացակայում է կամ չի համապատասխանում տարիքին: Տուժում է շարժողական ոլորտը, հոգեկան զարգացումը, ճանաչողական գործունեությունը:

Վերջին տարիներին զարգացման խանգարում ունեցող երեխաների շրջանում հաճախ են հանդիպում աուտիստիկ սպեկտորի դրսևորումներ ունեցող երեխաները, որոնք, ի թիվս այլ առանձնահատկությունների, ունեն նաև հաղորդակցման և խոսքի առանձնահատկություններ: Այս երեխաները չեն ձգտում և նույնիսկ խուսափում են շփվել անգամ իրենց ծնողների և ընտանիքի մյուս անդամների հետ: Հաճախ խոսքը բացակայում է, երբեմն էլ կրկնում են միևնույն բառերը, հնչյունակապակցությունները հիմնականում ոչ բնական առոգանությամբ և ձայնով: Երբեմն կարող են ծանոթ մուլտֆիլմից որևէ ամբողջական նախադասություն կրկնել՝ առանց հասկանալու դրա իմաստը: Չեն արձագանքում իրենց անվանը, տրվող հրահանգներին: Ձևավորված չի լինում նաև ոչ խոսքային հաղորդակցումը. խուսափում են նայել դիմացինի աչքերին, հույզերը, դիմախաղը իրավիճակին չեն համապատասխանում: Ցանկությունները (կարիքները) արտահայտում են բղավոցներով, անհարաժեշտ իրը վերցնելու համար մեծահասակի ձեռքը բռնելով՝ տանում են համապատասխան վայր: Գերադասում են անփոփոխ միջավայր (սննդի, խաղալիքների, հագուստի միօրինակություն) և փոփոխություններին

սուր են արձագանքում: Բնորոշ է նաև արարողակարգային վարք՝ միևնույն գործողությունների կրկնում և այլն:

Հնչյունային թերզարգացում: Առանձին հնչյունների կամ հնչյունախմբերի խանգարում, որը դրսևորվում է հնչյունների արտաբերման աղավաղմամբ կամ բացակայությամբ: Հնչյունային թերզարգացումն անվանում են նաև «կոսմետիկական» խնդիր, քանի որ այս դեպքում սխալ հնչարտաբերումը չի ազդում հնչութային լսողության, բառապաշարի, խոսքի քերականական կառուցվածքի ձևավորման և զարգացման վրա:

Հնչյունահնչութային թերզարգացում: Հնչյունների արտաբերման և հնչութային լսողության թերզարգացմամբ պայմանավորված խանգարում է: Հնչարտաբերման խանգարումները հիմնականում հանդես են գալիս հնչյունների շփոթումների, փոխարինումների, և աղավաղումների ձևով կամ էլ արտաբերումն ընդհանուր առմամբ ճիշտ է, բայց ոչ հստակ: Հնչութային լսողության թերզարգացումը դրսևորվում է բառում հնչյունի առկայությունը կամ բացակայությունը, բառի առաջին կամ վերջին հնչյունը որոշելու, ինչպես նաև բառերը վանկատելու, տրված հնչյուններով և վանկերով բառեր կազմելու և այլ դժվարություններով:

Խոսքի ընդհանուր թերզարգացում: Խոսքի բոլոր բաղադրիչների՝ հնչյունների արտաբերման, հնչութային լսողության, բառապաշարի, քերականական կառուցվածքի, ինչպես նաև կապակցված խոսքի թերզարգացումն է: Խոսքի հետ մեկտեղ տուժում են նաև այլ բարձրագույն հոգեկան գործընթացները և շարժողականությունը, ինչի հետևանքով թերի են կենտրոնանալու, աշխատանքի մի ձևից մյուսին արագ անցնելու, դժվարություններ հաղթահարելու կարողությունները, հիշողության կայունությունն ու ծավալը, գործունեության պլանավորումը և այլն:

ԳԼՈՒԽ 2 ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ԿՕԳՆԵՆ ԽՈՍՔԻ ԽԱՆԳԱՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼԻՍ

Ինչպես գիտենք, խոսքը և մյուս բարձրագույն հոգեկան գործընթացները սերտորեն փոխկապակցված են, և որևէ գործընթացի թերզարգացումը կամ զարգացման հապաղումը այս կամ այն չափով անդրադառնում է մյուս հոգեկան գործընթացների և ողջ հոգեկանի զարգացման վրա: Ուստի՝ շատ կարևոր է հետևել բոլոր բարձրագույն հոգեկան գործընթացների զարգացման ընթացքին երեխայի զարգացման խնդիրները հնարավորինս վաղ բացահայտելու և անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու նպատակով: Ստորև ներկայացված են 2-6 տարեկան երեխաների խոսքի զարգացման ոչ ճիշտ ընթացքի մասին վկայող ցուցանիշներ:

2-2.5 տարեկանում

● Հաղորդակցվում է առանց բառերի (բղավոցներով) կամ թոթվանքային բառերով ու ժեստերով:

● Չի արձագանքում իր անվանը:

● Չի խոսում, չնայած թվում է, որ ամեն ինչ հասկանում է:

● Չի հասկանում մեծերի հրահանգները՝ «տու՛ր», «տա՛ր», «բե՛ր», «ցու՛յց տուր» և այլն: «Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում»:

● «Խոսքն» անհասկանալի է նույնիսկ հարազատների համար:

● Արտաբերած բառերը հնչյունային կազմով խիստ տարբերվում են համապատասխան բառերից:

● Չի կարողանում լավ ծամել և կուլ տալ կիսապինդ սնունդը:

● Առկա է թքածորություն: Խոսելու ժամանակ թուքը հոսում է, և երեխան այն կուլ չի տալիս:

● Բառապաշարում առկա բառերը 20-ից պակաս են (2 տարեկանում):

● Չի ասում 2 բառից կազմված նախադասություն:

● Անտարբեր է մյուս երեխաների, ինչպես նաև ընտանիքի անդամների նկատմամբ:

● Խոսքում (ձայնում) առկա է քթային երանգ:

● Չի իրազեկում ուտելու, ծարավի, զուգարան գնալու մասին:

2.5-3 տարեկանում

● Չի հետևում երկու մասից բաղկացած հրահանգներին:

● Հարցին ոչ թե պատասխանում է, այլ մեխանիկորեն կրկնում է հարցը:

● Խաղում է միայն «Ծափիկ-ծափիկ»:

● Բառերն արտաբերում է խիստ անհասկանալի արտաբերությամբ:

● Թեև բառապաշարում առկա են բառեր, սակայն խոսելիս երեխան դրանք չի կապակցում և չի խոսում նախադասություններով:

● Չի խոսում 3-5 բառ պարունակող պարզ նախադասություններով:

3-4 տարեկանում

● Չի խաղում երեխաների հետ:

● Մինչև 3 տարեկանը չի խոսել և 3 տարեկանում սկսել է ակտիվորեն խոսել:

●Արտաբերական օրգաններով չի կարողանում կատարել պարզ գործողություններ (օրինակ՝ ըստ հրահանգի լեզուն հանել դուրս, ժպտալ, փչել, համբուրելու շարժում անել և այլն):

● Չի հետևում երեք մասից բաղկացած հրահանգներին:

●Թեև կարողանում է կրկնել բառերը, սակայն հաղորդակցվում է առանց բառերի:

●Չի կարողանում արտաբերել վաղ ի հայտ եկող հնչյունների մեծ մասը (ձայնավորներ, «մ», «ն», «բ», «պ», «փ», «դ», «տ», «թ», «ղ», «խ», «վ», «ֆ»):

● Բառերի վանկային կառույցը կոպիտ կերպով խանգարված է:

● Չի գործածում բարդ համադասական նախադասություններ:

● 3.5 տարեկանում շփոթում է նման հնչյունակազմով բառերը:

● 4 տարեկանին մոտ չի կարողանում 1-2 նախադասությամբ պատմել իր տեսածը:

4-5 տարեկանում

● Հարցեր չի տալիս («Ո՞վ», «Ինչու՞», «Ե՞րբ» և այլն):

● Խոսքում շատ են հնչյունների շփոթումները և փոխարինումները:

● Խոսքում հաճախ են դրսևորվում հնչյունների և վանկերի բացթողումներ, ավելացումներ և տեղափոխություններ:

● Չի կարողանում զրուցել, դժվարանում է հասկանալ հարցերը և պատասխանել հարցերին:

● Դժվարանում է մտապահել նոր սովորած բառերը և անգիր սովորել ամենապարզ ոտանավորները:

● Չի կարողանում պատասխանել լսած պարզ հեքիաթների («Պապն ու շաղգամը», «Գնդիկ-Բոքոնիկը», «Պույ-պույ մկնիկը») վերաբերյալ հարցերին:

● Բառապաշարը խիստ սահմանափակ է. չի կարողանում անվանել կենցաղում, առօրյա գործունեության մեջ հաճախակի գործածվող իրերը կամ շփոթում է նման առարկաների, կենդանիների անվանումները:

● Խոսքում չի գործածում բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններ:

5-6 տարեկանում

● Մայրենի լեզվին պատկանող որևէ հնչյուն ճիշտ չի արտաբերում:

● Բառերի վանկային կառույցը հաճախ է լինում խանգարված:

● Չի կարողանում որոշել բառում հնչյունի առկայությունը կամ բացակայությունը:

● 6 տարեկանում չի կարողանում որոշել բառի առաջին հնչյունը:

● Չի ընկալում և տարբերակում կապերը՝ «վրա», «տակ», «մեջ», «կողք», «առջևում», «հետևում»:

● Չի տարբերակում «1 հատ»-ը և «շատ»-ը:

● Չի ճանաչում և անվանում ոչ մի գույն կամ շփոթում է գույների անվանումները:

● 6 տարեկանում չգիտի հաճախակի գործածվող մրգերի, կենդանիների, թռչունների, մասնագիտությունների, մամնի մասերի անվանումները: «Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում»

● Նախադասություններում առկա են մեծ քանակությամբ քերականական սխալներ. եզակի և հոգնակի թվի, ներկա և անցյալ ժամանակների տարբերակման դժվարություններ, գոյականի և բայի, դերանվան և բայի համաձայնեցման սխալներ ըստ դեմքի, թվի և ժամանակի (Վորլդ Վիժն, 2005, www.nidcd.nih.gov/health/speech-and-language#1, www.asha.org/public/speech/development):

Խոսքի խանգարում ունեցող երեխաների համար խիստ կարևոր է խմբում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի առկայությունը: Այս համատեքստում մեծ տեղ է տրվում երեխաների հանդեպ մանկավարժների բարյացակամ և սիրալիր վերաբերմունքին, որը չպետք է նույնացնել ամենաթողության հետ: Շատ կարևոր են նաև մանկավարժների անձնային հատկանիշները, որը բացատրվում է այն հանգամանքով, որ խոսքի խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաներն ընդօրինակում են

մեծահասակների խոսքը, վարվելակերպը և այլն: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ խոսքի խանգարում ունեցող երեխաները հաճախ նեղացկոտ են և ունեն բարձր հուզականություն, և մանկավարժը պետք է կարողանա ճիշտ գնահատել երեխայի արարքները, դրանց դրդապատճառները, ինչպես նաև կարողանա ապրումակցել երեխային, իր հանդեպ երեխայի մեջ ձևավորել դրական վերաբերմունք և փոխըմբռնում (Пятница, 2005):

Խոսքի խանգարում ունեցող երեխաների հարմարումը (ադապտացիան) խմբում: Յուրաքանչյուր երեխա, ով նոր է սկսում հաճախել մանկապարտեզ, ունենում է հարմարման որոշակի խնդիրներ, քանի որ հայտնվում է անծանոթ մարդկանց (այլ երեխաների և մանկավարժների) միջավայրում: Երեխաները դժվարանում են վերափոխվել, և պահանջվում է որոշակի ժամանակահատված, որպեսզի նրանք «սովորեն» նոր մթնոլորտին: Վերոնշյալ դժվարությունները սուր են դրսևորվում խոսքի խանգարում ունեցող երեխաների դեպքում:

Խոսքի խանգարում ունեցող երեխայի վրա ներգործելու անհատական միջոցների/մոտեցումների ընտրությունը:

● Մանկավարժները հաճախ են բախվում խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների ոչ նորմոտիպային (ոչ ստանդարտ) վարքային դրսևորումներին (կանոներին չենթարկվելը, պարապմունքին չմասնակցելը, այլ երեխաների և իրենց միջև սահմանը չզգալը, նրանց խաղալիքները խլելը և այլն): Ավանդական մոտեցումների կիրառումն այս դեպքում անօգուտ է կամ քիչ արդյունավետ: Մանկավարժները պետք է իմանան, որ նեգատիվիզմի այսօրինակ դրսևորումները կարող են լինել երեխայի պաշտպանական մեխանիզմի դրսևորում՝ ի պատասխան հոգեբանական ճնշմանը և մանակավարժական խստության դրսևորմանը: Այս դեպքում արդյունավետ է երեխայի ուշադրությունը տվյալ իրավիճակից շեղելը և նրան իր համար որևէ հետաքրքիր, ակտիվ աշխատանքի մեջ ներգրավելը:

● Երեխաների բառապաշարի հարստացման, ճշտման և ակտիվացման աշխատանքները պետք է իրականացվեն ուսումնական ռեժիմի բոլոր օղակներում: Մանկավարժը ողջ օրվա ընթացքում գտնվում է երեխաների կողքին և հնարավորություն ունի երեխայի հետ բազմակի անգամ կրկնել նոր սովորած բառերը, առանց որի դրանք չեն ներթափանցի երեխայի ինքնուրույն խոսք: Լվացվելիս, հագնվելիս, զբոսնելիս մանկավարժը պետք է իր հարցերով դրդի երեխային խոսքային հաղորդակցման («ի՞նչ ես

անում», «ի՞նչ ես հագնում», «իսկ ի՞նչ է հագնում Անին», «Անիին ասա, որ հագնի կոշիկները»:)

Մանկավարժները պետք է մշտապես, այլ ոչ միայն պարապմունքների ընթացքում, հետևեն, որ երեխաները խոսքում ճիշտ արտասանեն լոգոպեդի կողմից շտկված (դրված) հնչյունները, ինչպես նաև հետևեն խոսքի քերականական կողմին՝ նրբանկատորեն ուղղելով սխալները: Նրանք պետք է հետևեն, որ որևէ մեկը չծաղրի երեխային սխալ հնչարտաբերման կամ քերականական սխալների համար, քանի որ դա կարող է հանգեցնել խոսքային նեգատիվիզմի դրսևորումների, խոսքային ակտիվության նվազման, ինքնամփոփության կամ շրջապատողների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորման (Ковалева, 2019):

Խոսքի խանգարում ունեցող երեխաների հետ աշխատող մանկավարժների խոսքին ներկայացվող պահանջները: Մանկավարժների խոսքը պետք է լինի օրինակելի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բոլոր երեխաները, այդ թվում խոսքի խանգարում ունեցողները, ընդօրինակում են նրանց խոսքը: Երբեմն, սակայն, կարելի է հանդիպել «Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում» 42 մանկավարժների, որոնց խոսքում դրսևորվում են հետևյալ սխալները՝ հնչյունների սխալ արտաբերում, ոչ ճիշտ շեշտադրումներ, բարբառային խոսք, մոնոտոն, անարտահայտիչ խոսք, որը, բնականաբար, գրավիչ չէ երեխաների համար և չի խթանում նրանց հետաքրքրվածությունը պարապմունքի ընթացքում: Նկատվում է նաև խոսքի արագ տեմպ, բազմաբառություն, անծանոթ բառերի կիրառում, փոքրացուցիչ-փաղաքշական մասնիկների «չարաշահում», բարդ տրամաբանական և քերականական կառույցների հաճախակի կիրառում, որը դժվարացնում է երեխաների՝ հատկապես խոսքի խանգարում ունեցող երեխաների կողմից ասվածի իմաստը հասկանալը: Կարելի է հանդիպել նաև երեխաների հետ թոթովախոսող մանկավարժների:

Մանկավարժները պետք է՝

- ճիշտ արտաբերեն բոլոր հնչյունները,
- հստակ արտասանեն բոլոր բառերի վերջավորությունները,
- խստորեն պահպանեն ուղղախոսության պահանջները,
- խոսեն արտահայտիչ. փոխեն ձայնի բարձրությունը, խոսքի տեմպը, հետևեն իմաստային շեշտի և դադարների պահպանմանը,

● երեխաների հետ խոսեն մի փոքր դանդաղ տեմպով, ոչ բարձր ձայնով և բարյացակամ տոնով,

● մատչելի և կապակցված շարադրեն ուսումնական նյութը՝ հաշվի առնելով երեխաների ոչ միայն տարիքը, այլ նաև խոսքի զարգացման մակարդակը (Кислякова, Мороз, 2007):

Խոսքի խանգարում ունեցող երեխաների հետ աշխատող մանկավարժների աշխատանքի առանձնահատկությունները: Անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի խոսքի խանգարման բնույթը, դրա արտահայտման աստիճանը, երեխայի խոսքային կարողությունները և անձնային առանձնահատկությունները: Երեխաները նաև տարբեր կերպ են վերաբերում իրենց խնդրին. որոշ երեխաներ, զգալով իրենց խնդիրը, դառնում են ինքնամփոփ, ոչ նախաձեռնող, մյուսները չեն էլ գիտակցում իրենց խնդիրը, և սա նույնպես պետք է հաշվի առնել երեխաների հետ իրականացվող աշխատանքներում: Շատ կարևոր է, որ երեխայի հետ աշխատող լոգոպեդն ու մանկավարժը համագործակցեն աշխատանքի միասնական ուղղվածությունը պահպանելու և շտկողական աշխատանքի շարունակականությունն ապահովելու նպատակով:

Մանկավարժը լուծում է հանրակրթական խնդիրներ և ձևավորում է գիտելիքների պաշար զբոսանքների, էքսկուրսիաների, շրջակա միջավայրի ուսումնասիրման ընթացքում: Միաժամանակ նա նպաստում է խոսքի զարգացմանը՝ աշխատանքներ իրականացնելով բառապաշարի հարստացման, տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման ուղղությամբ, սովորեցնում է նկարելու, ծեփելու, ապլիկացիաներ պատրաստելու և կառուցողական աշխատանքների ձևեր: Մանկավարժը ձևավորում է նաև հաղորդակցման կարողություններ, հուշում է, թե ինչպես է պետք դիմել ընկերոջը, ինչ ասել: Նա նաև խթանում է երեխայի նախաձեռնած խոսքային գործունեությունը:

Ցանկալի է, որ մանկավարժները տեղյակ լինեն երեխաների խոսքի զարգացման տարիքային ցուցիչներին և անհրաժեշտության դեպքում ուղղորդեն ծնողներին երեխաների համար ապահովել լոգոպեդական խորհրդատվություն (Микляева, 2001):

Չնայած խոսքի խանգարումներ ունեցող երեխաների հետ մանկավարժական աշխատանքին ներայացվող ընդհանուր պահանջներին՝ դրանք կարող են շատ առանձնահատուկ լինել նաև՝ կախված կոնկրետ խոսքի խանգարման տեսակից: Ստորև

ներկայացվում են նախադպրոցական տարիքում առավել հաճախ հանդիպող խոսքի խանգարումներ ունեցող երեխաների հետ աշխատանքի որոշ մանկավարժական մոտեցումներ:

Այս դեպքում թերզարգացած են լինում խոսքի բոլոր բաղադրիչները՝ հնչարտաբերումը, հնչութային լսողությունը, բառապաշարը, քերականական կառուցվածքը, ինչպես նաև՝ կապակցված խոսքը: Լիարժեք ձևավորված չեն լինում նաև այս երեխաների ուշադրությունը, հիշողությունը, բառատրամաբանական մտածողությունը, ինչպես նաև՝ մանր շարժողականությունը: Ուստի՝ լոգոպեդի, ինչպես նաև մանկավարժի աշխատանքը պետք է ուղղված լինի խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների՝

- ընկալման, ուշադրության, հիշողության, մտածողության զարգացմանը,
- լսողական ուշադրության և հիշողության, հնչութային լսողության զարգացմանը,
- ընդհանուր, մանր և արտաբերական շարժողականության զարգացմանը,
- տեսողատարածական և ժամանակային պատկերացումների ձևավորմանն ու «Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում» զարգացմանը,
- լոգոպեդի կողմից շտկվող հնչյունների արտաբերության ամրապնդմանը,
- լոգոպեդի կողմից ձևավորվող բառաքերականական կարողությունների ամրապնդմանը,
- երկխոսության և մենախոսության ձևավորմանը,
- հնչյունավանկային վերլուծության և համադրության կարողությունների ամրապնդմանը,
- երեխաների գրաֆոմոտոր կարողությունների ձևավորմանը,
- ընդհանուր և խոսքային վարքի դրական հմտությունների ձևավորմանը և շփման ընթացքում խոսքային միջոցները կիրառելու կարողության զարգացմանը:

Խոսքի զարգացման և խոսքային խանգարումների շտկման աշխատանքները պետք է ներառված լինեն գործունեության բոլոր տեսակների մեջ: Վերոնշյալ աշխատանքները մանկավարժների կողմից իրականացվում են ինչպես հատուկ կազմակերպված պարապմունքների, այնպես էլ պարապմունքներից դուրս գործունեության մնացած բոլոր տեսակների ժամանակ՝ ողջ օրվա ընթացքում (Медведева, 2002):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրականացնելով թեմայի շուրջ մասնագիտական գրականության վերլուծություն, կարելի է եզրակացնել, որ.

1. ՆՈՒՀ- երում հաճախ հանդիպում են խոսքի խանգարման հետևյալ տեսակները. **Դիսլալիա (թլվատություն), դիզարտրիա (անարտրիա), ռինոլալիա (ռնգախոսություն)**, **տախիլալիա, բրադիլալիա**, **կակազություն**, **ալալիա(անխոսություն)**, **հնչյունային թերզարգացում**, **հնչյունահնչութային թերզարգացում**, **խոսքի ընդհանուր թերզարգացում:**

2. Աշխատանքների ընթացքում պետք է հաշվի առնել երեխաների տարիքային, խոսքային և հոգեբանական առանձնահատկությունները: Խմբային աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է անհատական մոտեցում ցուցաբերել խոսքի խանգարում ունեցող երեխաների հանդեպ: Պարապմունքների ընթացքում անընդհատ պետք է աշխատանքի մեջ ներգրավել խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաներին, ինչպես նաև հերթագայել ֆիզիկական և հոգեկան ակտիվությունը պարապմունքների ընթացքում:

Աշխատանքների ընթացքում պետք է հաշվի առնել երեխաների տարիքային, խոսքային և հոգեբանական առանձնահատկությունները: Խմբային աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է անհատական մոտեցում ցուցաբերել խոսքի խանգարում ունեցող երեխաների հանդեպ: Պարապմունքների ընթացքում անընդհատ պետք է աշխատանքի մեջ ներգրավել խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաներին, ինչպես նաև հերթագայել ֆիզիկական և հոգեկան ակտիվությունը պարապմունքների ընթացքում:

ՕԳՏԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. 2-6 տարեկան երեխայի զարգացումը և դաստիարակման գաղտնիքները, 2005, Նախադպրոցական ինտեգրացված ուսուցման զարգացման ծրագիր, Վորլդ վիժն Ինթերնեյշնլ, Հայաստանյան մասնաճյուղ, ՀՀ ԿԳ նախարարություն և Յունիսեֆ:

2. Ավագյան Ա., Գրիգորյան Ա., Թադևոսյան Է., Կարապետյան Ս., Կիրակոսյան Ա., Հովյան Գ., Չարչյան Ա., Պայլոզյան Ժ., 2017, Լոգոպեդիան գործնականում, Երևան, Ասողիկ, 76 էջ:

3. Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ, 2011, ՅՈՒՆԻՍԵՖ (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ), Երևան, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Փրինթինֆո, 184 էջ:

4. Браудо Т.Е., Бобылова М.Ю., Казакова М.В. (2017). Онтогенез речевого развития.// Русский журнал детской неврологии. №4. С. 41-46

5. Глухов В.П. (2017). Онтогенез речевой деятельности. Курс лекций: Учебное пособие.- М., МГПУ, 136с.